




891.99

Գ-67



ՄԿԱ ՎԱԽ ԶՈՒՆԻՄ

Գրեց
Գիրկանը



Փ Ա Ր Ի Զ

ՏՊԱԳՐ. Պ. ՄԻՍԱՔ - 4, RUE ORTOLAN
1901

ԻՐ ՎԱՐԴԱՐԱՆԱՄ ՈՐԴՈՒ

ՎԱՀՐԱՄԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒՐԵ

Աշացեալ «Գիւղասան և հան»

52857-ար



58109-67 9



ՄԿԱ ԵՍ ՎԱԽ ԶՈՒՆԻՄ

Ա.

1904 թուի նոյեմբերի 22-ին, երեսկոյեան դէմ, դառն մտածմունքների մէջ խորասուզուած՝ տանից դուրս դալով, դընումէի ինքս էլ չխմանալով՝ թէ ուր։ Փչումէր երեսիս աշնանային պաղ քամին եւ սըրտիս վրայ կուտակուած բաղմաթիւ ցաւերիս մի տեսակ զովութիւն, թարմութիւն բերում։ Զը նայելով այդ պահուն դուրսը ոչ ոք չկար, ամեններեան պատսպարուել էին իրեց տաք օդաներում, բայց եւ այնպէս ես գրեթէ մի քանի ըոպէում արդէն անցել էի մի քանի փողոցով։ Մի փողոցով անցնելիս յանկարծ մի 65-70 տարեկան ծերունի դաղթական, մերկ, բոկոտն, դողդողալով ինձ ասաց։

- Աղա՛-ջան, խնդրեմ նեղութիւն քաշես, Քռոյի մահլէն ինձի խրատ տաս :
- Ի՞նչ գործ ունիս այս տեղ, հարցը ես :
- Աղա-ջան, հէնց էս է մեր երկրէն գալըս, օտար եմ, անծանօթ եմ, մարդ չեմ ճանչնար ... Ասօր 18 օր է մեր երկրէն դուրս գալս, օր ու գիշեր ճամբայ կուզայի. աստեղ տեղ մը չեն տար աս գիշեր գլուխս հանդիստ գնելու մինչեւ էգուց ... Ինձի ըսին՝ գնա՛ Քռոյի մահլէն, հոն գիւղացիք կը թնակին, քըզի տեղ կուտան :
- Ո՞ր տեղացի ես, ափօ՛ :
- Խնուսայ եմ, ա՛զա :
- Ո՞ր գիւղից :
- Գովանդուկ գիւղէն, մըոնի՛մ քըզի :
- Արի՛, ափօ ջան, գնանք ինձ մօտ, էսօր դու իմ պատուական հիւրն ես, ասացի եւ տարայ ինձ մօտ :
- Նստի՛ր :
- Բեռը վայր գնելով նստեց ծերունին եւ մի դառն ա՛խ քաշեց սրտի խորքից ... « Փա՛ռք քեզ Աստուած, որ ողջ եւ անվըտանգ հասցըիր հոս » ... կարճ եւ խորհրդաւոր աղօթքը մըմնջաց նա ...
- Ափօ ջան, անունդ ի՞նչ է :
- Մկրտի, քըզի մեռնիմ :
- Մկրտիչ ափօ, ասում ես՝ թէ էս է մեր

հայրենիքէն գալս, դէ, պատմի՛ր, եթէ քեզ
նեղութիւն չի լինիլ, ձեր երկրի գրութեան
մասին :

Ծերունին յօնքերը վեր բարձրացրեց,
սրբեց աչքերից հոսող աղի արցունքի կա-
թիլները, որոնք գլորուելով՝ անհետում
էին ձերմակ, ինչպէս ձիւն մօրուսի մէջ,
ու սկսեց խօսել :

— Պատմեմ քըզի, ի հարկէ պիտի պատ-
մեմ, էլ ո՞ւմ պատմենք մըր ցաւեր, դար-
դեր, եթէ ոչ մըր աղբրտանց : Ա՛մմա իմա՞լ
պատմեմ, ես ալ չըմ գինայ, ո՞ւրկից սկսեմ
զիմ պատմութիւն . . .

— Օրինակ, պատմիր ձեր գիւղերից,
տեսնենք ինչո՞ւ են զաղթում զալիս մեր
երկիրը :

— Ա՛խ, աղա-ջան, իմա՞լ ընենք, որ
չգաղթենք մըր երկրէն, մըզի բան չթոր-
գին, զմե՛ն, զմե՛ն թալնեցին տարան ա-
նօրէն քիւրդերը . . . Ողջ մնացածներն ալ
անօթութենէ նեղեալ ցիր ու ցան եղան . . .

Լոեց ծերունին, նա այլ եւս մի բառ
անգամ չէր արտասանում, նրա ուշքն, միտ-
քը ու սիրտը վաղուց էին թռել դնացել
ա'յնտեղ, որտեղ նահատակուել են իւր
հարազատները . . .

— Ի՞նչ ըսեմ ֆալաքին . . . — շուրջը նա-

յելով արտասանեց ծերունին : — Ա՛խ ներողութիւն , աղա' , ինձի կորուցի . . . Ա՛հ , ի՞նչ պատմեմ քըզի , ներողութիւն կընիս , աղա-ջան , որ գլխացաւանք պիտի տամ քըզի , զիմ պատմութիւն շատ ու շատ երկար է :

— Աստուած ողորմած է , ափօ' , շատ մի' մտածիր :

— Մըր երկրում սով կայ , աղա , շատ տեղեր բուռ մը ալիւր չես գտներ . . . ներկայիս ալ խեղճ ժողովուրդը սովից կը կոտրուի . . .

— Դու ասում էիր , թէ իմ դարդերից պիտի պատմեմ քեզ , գէ' , պատմի' ր տեսնեմ գլխովդ անցածը , — ընդհատեցի նրան :

— Հա' , պատմեմ , ամմա դուն աղէկ ականջ արա' , տե՛ս թէ ինչե՛ր եմ քաշեր մըր երկրում : Հա' յ գիտի , իմալ ծերացեր անաղէտք եղեր եմ . . . եթէ մէկ մ'ալ ջահէլնայի , ան ատեն ես գինամ , ինչե՛ր կընէի . . . Օր մը , աղա-ջան , մըր գիւղին մօտ գտնուած Հաջի-Քոչք քիւրդ գիւղացի աւազակ Հաջի-Աբտալ իր մարդերով՝ իմ տունը չեղածս ժամանակին , մըր տան վըրայ կը յարձակուի ու կը տանի հաւեր , զազեր , եղներ , կովեր ու ամեն բան . . . ինձ իմաց տուին մըր տնեցիք : Հեծայ ձին ,

կապեցի զիմ թուր, զիմ խանչալ, վերուցի թիֆանգսու ու դացի Հաճի-Աբտալին տուն։ Աբտալ զիս տեսնելուն պէս հրամայեց իր մարդերին ձիուս սանձը բռնել, զիս իջեցընել ձիուց ու մեծ պատիւներ տուաւ։ Հացի ժամանակ պահանջեցի մըր տանից թալնած տարած բաները։ Հաջի-Աբտալ իսկոյն հրամայեց իր տան մէջ գտնուած մարդերին զիս բռնել ու ծեծել... ինչ ըսեմ ֆալտքին. ջահել ժամանակս մարդ կրնար ինձի մօտենալ, ծեծել։ Հաջի Աբտալին տանը իր մարդերին լաւ մը ծեծ տուի, ո՛րը մօտեցաւ ինձի՝ անպէս թալեցի գետին, որ էսօր չէ մեռեր, տասն օր առաջ է մեռեր... Հաւար ինկաւ գիւղին մէջ. ժողովեցան քիւրաեր, զիս կապուաեցին, վայր ձգին, ծեծեցին, հանեցին վրայիս շորերը ու անպէս ճամբայ ձգին մըր գիւղը։ Օր մը, զօրը, Հաջի-Աբտալ իր մարդերով մտաւ մըր տուն եւ մուրհակ մը ցուցնելով, որի տակը զարկած էր մոհրը (կնիք), զոր գտած է եղեր անօրէն քիւրաը վրայից հանած շորերուս ջէրը՝ կը պահանջէ ՅՈ լիրա։

— Այ քիւրա, — ըսի, — ախր քըզի ես պարտ չեմ, ի՞մալ Աստուած կը պաշտես դուն, որ ազպէս սուտ մուրհակով

ինձմէ փարա կուղես :

— Տունդ տեղդ հրոյ ճարակ կընեմ, իմա՞լ կը համարձակուիս տուածդդ մուրհակը սուտ հանել . . . Բե՛ք առ սհաթիս փարեքս, թէ չէ ողջ-ողջ կայրեմ քըզի, ընտանիքդ ու սկսեցին տունս տակն ու վրայ ընել . . .

— Ճարս ի՞նչ, ինկայ դիւղին մէջ, ժողովեցի ՅՕ ոսկի, տուի անօրէնին ու աղատեցի ընտանիքս : Օր մ'ալ Խնուսա գայ-մագամ Ալի աղան զիմ եղբայր բանտարկել կուտայ առանց պատճառի մը : Դացի Խնուս գայմագամին մօտը, խնդրեցի արձակել անմեղ աղբօրս :

— Բէկ, — ըսի, — ի՞նչ է աղբօրս յանցանքը, ըսէ՛ ինձի, պատրաստ եմ անոր տեղ զլիսովս պատասխան տալու :

— Գնա՛, Մկրո, հանգիստ քու տունդ, — լիրը-լիրը խնդալով պատասխանեց գայ-մագամը, — դու լաւ հա՛յ ես . . . Ես քու աղբօրդ հետ գործ ունիմ :

— Ի՞նչ գործ ունիս, բէկ, ըսէ ինձի :

— Դու չես դիտեք հա՞ , դեաւուր հայ, — պոռաց վրաս գաղան բէկը. — առ երեք տարի է, որ դուն աղահանքին վրայ կաշխատիս ու ինձի բաժին չես հանեք : Երեք տարին, տարեկան 20-ական ոսկի որ աշխատած ըլլաս, կընէ 60 ոսկի. անոր 20

ոսկին քըզի շա'տ ու շատ բար է, իսկ 40
ոսկին ո՞ւր է, ինչո՞ւ ինձի բաժին չես բե-
րեր... հիմայ հասկցա՞ր ձեր յանցանք:

— Բէկ, խղճա՛ ինձի, որդոցս, — ըն-
կայ ոտները, — ախր 20 ոսկի ես տարե-
կան աղահանքէն ե՞րբ կը բերեմ... խղճա՛,
ախր ես տարին տասներկու ամիս կաշխա-
տեմ, հազիւ 10 ոսկի ձեռքս կիյնայ, բէկ,
10 ոսկով ես ի՞մալ համ ֆիւլֆարս պահեմ,
համ տէրութեան հարկերը տամ, համ ալ
քըզի բաժին հանեմ...

— Տարէ՛ք սա գեաւուրին ալ բանտն ձը-
գեցէք, — հրամայեց բէկը զարթիաներուն:

Աղ միջոցին հարուստ թիւրք մը ներս
մտաւ, իմանալով գործին եղելութիւնը,
խղճաց, առաւ ինձմէ 40 ոսկու մուրհակ,
տուեց իր գրպանէն 40 ոսկին գայմագամին
ու ինձ աղբօրս հետ աղատել տուաւ բան-
տէն: Աս տարի Մորեան գիւղացի աւազակ
Դաժդին իր մարզերով վրայ տուեց մըր
գիւղին վրայ... մէնակ զիմ անէն անօրէն
քիւրտը տարեր է 5 եղ, 5 կով, 4 գոմէշ,
1 ձի... աղջկանս համար պատրաստած ջը-
հէզը ու տան մէջ եղած բաները... սպա-
նեցին Խարա-Չորան հայ գիւղի հարուստ
եղիազարին, անոր եղեօր որդուն ալ կու-
զեն սպանել: — Մըր Խնուսայ Գովանդուկ

Եարա-Զորան, Բուլնազ, Սալուորի, Դրիմ
-Դայտ հայ գիւղերը աւերակ դարձեր են.
տուն-տեղ քար ու քանդ ըրեր, մալը քշեր
տարեր են գաղան քիւրտերը . . . շատերին
ալ սպաներ են . . . մընք ունէինք շա'տ
քաջ տղէրք, որոնք կը պաշտպանէին գիւ-
ղերը քիւրտ, տաճիկ ու չէրքէզ աւազակ
խմբերու յարձակումներէ . . . մկայ չկա'ն,
շատերը անմեզ տեղը ամբաստանուելով՝
ինուսայ բանտերու մէջ կը տառապին . . .
մըր գիւղի քաջ մարդերէն մին, Մխօն,
որ մըր գիւղերը կը պաշտպանէր, չիր թո-
ղուր, որ մէկու մը մազը պակսի, մըզի
պահապան հրեշտակ էր, — անիկ ալ նա-
հատակուեցաւ, ինկա'ւ անօրէն քիւրտ ու
չէրքէզ աւազակներէն . . . հա'յ գիտի, եա-
լա'ն գիւնիա, տե՛ս, տե՛ս իմալ մարդեր
կը մեռնին . . . ազա-ջան, ըսածո Մխօն մէն
մէնակ կիյնար քիւրդ աւազակներու ետե-
ւէն, համ անոնց տարած աւարը յետ կը
խլէր, համ բան մը ալ աւել կը խլէր . . .
ըշտէ աղպէս քաջ մարդ էր Մխօն. ամմա
ի՞նչ ըրած, որ Եկմալ գիւղացի թաղօ, Սա-
յիդ եւ Բաղալ անուն աւազակ եղբարք չէր-
քէզներու հետ կուզան Գոլանդուկ ու կը
քշեն տանեն Մխոյի տաւարը : Մխօն կիյ-
նայ ետեւներէն, կը խլէ իր մալը ու կը

Նառնայ գիւղ. քիւրդերն ու չէրքէզները
ամօթից յետ կը դառնան ու կռուի կը բըռ-
նուին Մխօին հետը. Մխօն կը սպաննէ
զբատալ ու ինքը կը նահատակուի անօ-
րէններէն :

— Մխօն ե՞րբ է սպանուել :
— Մայիսին :
— Նրա ազգանունը ի՞նչպէս է :
— Բոջոյենց Մխօ կը կանչէինք :
— Ել ուրիշ ի՞նչ քաջութիւններ է ա-
րել Մխօն :

— Շա՛տ, շա՛տ բաներ, անոր ըրած-
ները շատ երկար պատմութիւն է. անոր
տեսնողը կը սարսէր, կը դողար, անպէս
ժայռի պէս մարդ էր :

— Սպանողին չպատժեց կառավարու-
թիւնը :

— Ի՞նչ, իմա՞լ խամ-խամ կը խօսիս,
աղա, կա՛ց քըզի ըսեմ: Քիւրդերն ու չէր-
քէզները համ Մխօին սպաննեցին, համալ
դանգատ տուին հայերու վրայ. կառավա-
րութիւնը զօրք ուղարկեց Գովանդուկ
գիւղ, շատ գէշութիւններ ընելէն վերջը՝
բռնեցին տարան Խնուսայ բանաը ձգեցին
գիւղի երիտասարդներէն 25 հոգի: Ադ 25
հոգու մէջ էին եւ Մխօի եղբայրն ու որդին:
Շատ տանջանքներու ենթարկելէ ետքը,

մի քանիսին արձակեցին, Մխօի եղբայրն
ու որդին ալ կաշառքով ազատուեցան, ամ-
մա Մխօի եղբայրը քանի մը օր ապրեցաւ
առնը, մհուա՛ւ . . .

— Է՛, ի՞նչպէս է պատահիլ Մխօի սպա-
նութիւնը, ասա՞ :

— Թոյլ կուտաս, աղա ջան, անոր ըս-
պանութիւնը քեզի թարիֆ ընեմ խաղով :

— Ասա՞ :

Չիժուար իւսիւնդայ արիլեր,
Մալլարի ախարդիլեր,
Խարար Մխոյա զեարրդիլեր :

Ա՛յս, նէ՞ դեղու,
Աջալ զեարիլիշ թեն զիդերիմ,
Բեն զիդերիմ.

Հե՛յ վախ, հե՛յ վախ դիւնեա,
Ֆանի գեղաբ *

Մխօի արա թիւնդիրդիլեր,
Մխօի դաղլարա սալդիլեր,
Երիսլար օնի զեօրդիլեր,
Թիժենիլերի դողըրդըլեր :

Հախտան զեղի թիզէ գերւան,
Եօդդըր բու դերդիսկ դերւան,
«Գաւըշ-դերէ» բուսի դուսան,
Նասիր, դըսեր, ախրէր իման :

Մխօ եօրպար գինօ գասի,
Դերեկերդէն զելիր սէսի,

* Ամեն տան վերջը կրկնուում է :

Օդալարդան օղուր բասի,
Միրադ կալդի քեօշկի բաղի...

Դուրդուշուն գելր ջեօշայ, ջեօշայ,
Մխօնըն բաշընդան աշա,
Խնուս բուսսի թեւ բաւաշայ,
Ամազըն զեսսի հաշայ:

Բատալ դեսի՝ գեա՛րեկ, Մխօ,
Մխօ բիր նիշան վերդի,
Բատալն ջիզեարի եանդըրդի:

Չերժեկ բիր նիշան վերդի,
Մխօնն ջիզեարի եանդըրդի.
Խուրչիդ, օղո՛ւմ, դերդիմի եա՛զ,
Բենի վուրան ֆեաֆիր չերժեկ * :

Մխօի դաղդան գերիրդիլեր,
Արաբայա բինդիրդիլեր.
Բին-Գեօլ սուի ֆէջիրդիլեր
Մազարազեայ ենդիրդիլեր:

Դելեն, զիդեն աղլադրար:
Հե՛յ վախ, հե՛յ վախ դիւնխա՛,
Ֆանի գալեֆ, եւ այլն:

— Բշտէ՛, աղա-ջան, ասպէս է եղած քաջ
Մխօի սպանութիւնը, աս երգը թուրքե-
րէն է, շատ երկար է, երգած է մըր գիւ-
ղի հայ աշուղը. կը հասկնա՞ս խօսքեր:

* Մխօն վիրաւորուելով՝ յիշում է իւր
Խուրչիդ անունով որդուն եւ դիմումնընըն
այդ երկու տողով ...

— Բ. Հայէ ագպէս :

— Այժմ պատմի՛ր ինձ, ի՞նչո՞ւ ես եկել
մեր կողմերը :

Ա՛ն, ես ինչ գինամ, ա'ղա, մկայ էս
տարիքիս հէջ կիյնա՞յ հայրենիքէն զատ-
ւիլ, չէ՞ որ հոն են զիմ պապերու գերեզ-
մաններ . . . ամմա՛ ի՞նչ ըսեմ ֆելաքին,
որ մըզի ձգեց օտար երկիր . . . Մըը քեամ-
բաղդ հայրենիքում գեղեցիկ հայ կին մը,
հայ կոյս աղջիկ մը քիւրդը կամ տաճիկը
տեսնելուն պէս՝ համարձակ օրը ցերեկով
կը քաշի կը տանի իր հարէմ . . . հոն լըլ-
կելէն ետքը, ոմանց զոռով Մահմետի պիղծ
հաւատն ընդունել կուտան, ոմանց ալ կըս-
պանեն : Ես ալ ունիմ աղջիկ մը, ինչպէս
ըսի, որ շատ դեղեցիկ է, ադ աղջկան
պիտի փախցնէին քիւրդեր ու տաճկըցնէին,
եթէ տղաս դաղտագողի չըբերէր աղջկաս
աս կողմեր . . . Ես ալ, զրկուած տնէս,
տեղէս, մալէս, սիրելիներէս, ինկայ աս
ծերութեանս ժամանակ օտար երկիր, կը
փնտրեմ զանոնք :

— Ի՞նչպէս անցար :

— Շատ նեղութիւններ քաշեցի, աղա,
սահմանին վրայ ոռուս ասկեարներ զիս
քիւրդ կարծելով՝ բռնեցին «տվօյա կարապ-
շիկ քիւրդ» ըսին . . . Երեսիս խաչ հա-

նեցի երեք անգամ, ըստ վալլահ ևս քըրիստոնեայ եմ, հայ եմ։ Զը հաւատացին ինձի, տարան իրենց մեծաւորի քով։ Ան ատեն մեծաւորը խղճաց զիս, բան մը տուեց փաթըթուելու, հրամայեց սորեկն վառել ու հաց բերել։ Աստուած կեանք տայ մեծաւորին, կերայ, կշտացայ, տաքցայ, օրհնեցի, յետոյ մեծաւորի ասկեարը ինձի բերեց ճամբայ ցուցուց ու ես եկայ . . . Իշտէ աղպէս, աղա-ջան, թիւրքեր, քիւրդեր եւ չերքէզներ մըզի աս օրը դցեցին . . .

Տիրեց կրկին խորին լուսթիւն, ծերունին կրկին անձնատուր եղաւ իր դառն ցաւերին :

Բ

— Վերջապէս հասանք աստեղ, ա'լ մըզի բան ըսող չի՛ լինի. ամմա մըզի ո՞վ տեղ կուտայ աս գիշեր մըր գլուխը հանգիստ գնելու, մինչեւ որ տեսնենք վազը Աստւած ի՞նչ կը տնօրինէ, — ասում էր մօտ 19-20 տարեկան, գեղեցիկ, համակրելի գէմքով, վայելուչ կազմուածքով մի նորեկ գաղթական երիտասարդ իր յետեւից գնացող մանկամարդ կնոջը, որը բոլորովին փաթաթուած էր ցնցոտիների մէջ, բոկոտն, իր կրծքին սեղմած մի փոքր արարած . . .

որը անդադար լալիս, ճշում էր :

Այդ գրութեան մէջ էլ այդ թշուառ գաղթական կինը նազելի օրիորդի էր նմանում իր անհման գեղեցկութեամբ ու վայելուչ կազմուածքով :

Ալ վախ չունինք, աստեղ ազատ երկիր է, մընք կարող ենք մինչեւ անգամ բացօպեայ տեղ մը մըզի համար գիշերս անցունել. ո'չ ոք կրնայ մըզի բան մ'ըսել . . .

— Դէ՛, ուրիմն քալէ՛, երթանք :

— Քալէ՛. մի յուսահատիր, Աստուած ողորմած է, — յուսազրեց կինը իր առջեւից գնացող երիտասարդ տղամարդուն, ու պահ մի դէս ու դէն նայեց, նայեց շինութիւններին, հրապարակի վրայ գտնուած կառքերին, անց ու դարձ անող տղամարդկանց ու կանանց. ուզում էր բան ասել, բայց չէր վստահանում, ուստի և լուս հետեւեց զաղթական տղամարդուն :

— Քալէ՛ . . . բայց . . . ո՞ւր երթանք, աստեղ մըր գիւղին գաղթականներէ ո'չ ոք կերեւայ, որ անորմէ հարցունենք աստեղին մարդասէրներու մասին. հալբաթ մըզի ա՛լ տեղ մը կուտան, աս երեխային ցաւը ինձի բոլորովին առեր է, չըմ գինա ինչըս պիտ եղնի ասոր դրութիւնը :

Այդ երկար ու յուսակտուր խօսակցու-

թեանը ես ներկայ էի. նրանցից ոչ հեռու կանգնած, ամենայն ուշագրութեամբ լսում էի, եւ կամենալով ծանօթանալ այդ թըշւառ գաղթականների զրութեան հետ՝ մօտեցայ նրանց :

— Ո՞րտեղից էք գալիս եւ ո՞ւր էք մըսագիր գնալ :

— Էֆէ՛նդըմ, մընք քըզի բարեսիրտ մէկն ընդունելով քովով կայնած երկար կը զրուցէինք. ըշտէ համկցար ուրկէ կուգանք, ուր երթալնիս ա'լ մի հարցուներ, որովհեաեւ մըզի համար աս երկրին ամէն կողմը մէկ է . . . Հոս մըզի, կարծեմ, չարչարող տանջող, անպատճող չի' կայ . . . մընք ազատ ենք աս երկրին մէջ . . .

— Այո՛, ազատ էք. ասացէք ո՞ր տեղացի էք եւ ի՞նչո՞ւ էք գաղթում:

— Մընք ինուսայ զաւասի Գովանդուկ գիւղից ենք, էֆէնդըմ . . . — ու փոխանակ իմ բոլոր հարցերին պատասխանելու, երիտասարդը սկսեց լալ, հեկեկալ :

— Մի՛ այդպէս յուսահատուիր, չէ՞ որ դու ի՞նքդ ես ասում, որ մենք այժմ գըտնում ենք ազատ հողի վրայ . . .

— Ա՛յս, ի՞նչ ընեմ որ չլամ, ախր կը տեսնա՞ս աս հետս քալող կինը, — ասոր ազատելու համար ես տնէ, տեղէ, մալէ,

կարողութենէ, ծնողներէ զբկուեցի . . .
վա՛յ մըզի, չեմ ըսէ գեռ մըր սիրուն վա-
թանէ . . . նայէ՛, տե՛ս առ կինը զիմ կո-
ղակիցս է, տարիու կէս կայ, որ մընք
միացած ենք թագ ու պսակով. նայէ՛,
տե՛ս թէ զիմ անմեղ անդրանիկ ճիժս ի՞նչ
օրերու մէջ է . . . ըշտէ ասորմէ կրնաս եզ-
րակացունել թէ ինչը մըզի կըստիպէ թո-
ղուլ մեր հայրենիքը, տուն տեղ ու հեռա-
նալ օտար երկիրներ :

— Այս ի՞նչ է, — սոսկացի տեսնելով
մանկան փորը պատռածած, — ո՞վ է այդ-
պէս բարբարոսաբար երեխայի փորը պա-
տըռել :

— Ո՞հ, ա՛լ մի՛ հարցունէր, էֆէնդըմ,
ըշտէ գիտնաս, ալ ինչո՞ւ կը հարցունես . . .

— Բացի տաճիկներէ եւ քիւրդերէ այդ-
պիսի բարբարոսութիւն մարդ արարածը
իր նմաններուն, ան ալ անմեղ մանկանց-
կընէ՞ . . .

— Աս ցաւը մըր գլուխը բերին Դարա-
Քիլիսա կոչուած տեղում, տան մը մէջ,
տաճիկ ասկեաբները . . . Գինա՞ս, պատ-
ճառը ի՞նչ էր, — ան է որ գիշեր ատենը
ես բոլոր ուժովս դիմադրեցի անօրէններու,
թոյլ չտուի որ անոնք մօտենան զիմ կո-
ղակիցին . . . Ես սոսկալի ծեծ մը կերայ,

անոնց ալ ուսեցրի, բայց չըթորգեցի որ...
Անոնք ալ վերջը իրենց աղուն (թոյնը)
թափեցին խեղճ անասունիս վրան...

— Անունդ ի՞նչէ, — ընդհատեցի նրան:
— Մարկոս, քեզ ծառայ. կողակցիս ա-
նունն ալ Դիոդորաթ է, քըզի աղախին:
— Հօրդ անունը ի՞նչ է:

— Մկրօ... անիկա ո՞վ գինայ, երկար
ժամանակէ ի վեր մեղանից տեղեկութիւն
չառնելով, երեւի դարդամահ եղած է կամ
խելազարուած է: — Հա, էֆէնդըմ, մընք
մըր գիւղին մէջ հարուստ տուն էինք, ա-
մեն բան ունէինք. ամմա Դաժդի անուն
աւազակապետն իր մարդերով քանի մը ան-
գամ վրայ տալով մըր գիւղին վրայ՝ զմե՞ն,
զմե՞ն թալնեց տարաւ, շատ մարդեր սպան-
նեց, շատերն ալ զրագարտութիւններու
զոհ՝ զացին-ինկան յաւիտեան մութ բան-
տերու մէջ... Ես գեղեցիկ քոյր մը ունէի,
անոր եւ այս աղախին քրոջդ կուզէին փախ-
ցունել անօրէն տաճիկներ. ես ալ գիշեր
մը առի զանոնք գիւղէն փախայ. քրոջս
իւզմէրանու մէջ տուի քաջ հայ աղու մը,
իսկ պատիւս* առի անցայ աս աղաս երկիրը:

— Մկրօ', — յանկարծ յիշեցի ծերունի

* կակնարկէ իր կնոջը



ինուսեցու պատմութիւնը. — Հայրդ ի՞նչ
տեսակ մարդ է : — Նա պատմեց ինձ այն-
պէս, որպէս ես տեսել էի նրան ինձ մօտ :
— Ուրեմն գնանք, — ես ձեզ համար տեղ
կը ճարեմ, որտեղ գուք կարող էք հանդիսա-
ապրել եւ ձեր հիւանդ մանկանը գարման
անել :

Այստեղ, սիրելի՝ ընթերցող, թողնում
եմ ձեզ երեւակայելու այն րոպէն, երբ ես
ներս եմ տանում յիշեալ գաղթական զոյ-
գին այն յարկի տակը, ուր մնում էր «ծե-
րունի ինուսեցին», որը փոքր ինչ կազ-
կազդուրուելուց յետոյ պիտի փնտրեր իր
կորուսեալ որդիներին, որոնց յիշելիս միշտ
իր աչքերից աղի արցունք էր թափում :

— Ասառա՞ծ իմ, Ասառա՞ծ իմ, — գող-
դոջուն ձեռքերով գրկեց խե՛զն ծերունին
իր որդուն եւ հարսին, — հեռո՛ւ, հեռո՛ւ
երազը ինձմէ, երազիս մէջ չե՛մ ես, զիմ
աչուըներ զիս չեն կրնայ խաբել :

Երկար այդ գրութեան մէջ էին գրանք,
որ ծերունու աչքը յանկարծ ընկաւ վրաս :

— Ա՛ն, գարձեալ գուն ես, էֆէնդըմ,
վալլահ մըր ազգը կորսուելու ազդ չէ, արի՛,
արի՛, որդի, բան ունեմ քըզի ասելու :

— Ասա՛ :

Հիւանդ ծերունին շտկուեց տեղից, նըս-

տեց անկողնու մէջ, վասեց իր ծխամորճը ու սկսեց ծխել. թանձը միսի հետ, որ տարածւում էր խրճի ամեն կողմը, կարծես դուրս էին գալիս ծերունու այրուող սրտի խորքից դառն մտածութիւններն ու չքանում: Նա մի փոքր հանգստանալուց յետոյ դարձաւ դէպի ինձ:

— Իմ օրերս լմնցեր են, մնացածն ալ ձըզի թո' լ ըլլայ, թող ամենակարող Աստւած մեղաւորիս աղօթքը լսելով՝ օրհնէ ըզձեղ, երկար կեանք պարգևեսցէ:

Ծերունին երկա՛ր, երկար բարեմաղթութիւններ էր անում իմ հասցէին, երբ ես թողի հեռացայ:

Մի քանի օր յետոյ լսեցի որ ծերունին այլ եւս չկայ, նա՝ իր «միակ փափագը առնելէ ետքը», ինչպէս ինքն էր ասում, կնքեց իր երկրաւոր կեանքը: Մեռաւ նաեւ Մարկոսի վիրաւորուած մանուկը:

Այնուհետեւ շատ անգամ պատահում էի երիտասարդ Մարկոսին փողոցներում շտապով դէպի նոր շինութիւնները գնալիս, ուր նրա համար միշտ գործ կար:

— Մարկո՛ս, — մի օր պատահելով հարցը ինըան, — օրական որքան ես ստանում եւ ո՞րտեղ ես բնակւում:

— Աստուած կեանք տայ քըզի, ակա-

ջա՞ն, — երեսիս նայելով պատասխանեց նա, — փառք Աստուծոյ, մկա լաւ ենք, մըզի համար օրական ըշտէ հացի փարա Աստուած կը հասցնէ, կաշխատենք: Օրհնեալ է Աստուած, «խազէինս» զիս շատ կը սիրէ, օրական ինձի կուտայ 30 կոպէկ. ըշտէ կապրինք մըզի համար, ո'չ ոք մըզի չի վիրաւորիր, չի ըսեր թէ աստեղէ ե'լ անտեղ նստէ...»

Այդ սգի օրերում ի միսիթարութիւն իւրենց այդ զոյգը ունեցաւ մի արու զաւակ: Մի օր Մարկոսին, որին միշտ տեսնում էի տխուր, մռայլ, մտածող ու մտախոն դէմքով, — տեսայ շատ ուրախ:

— եէ՞ր լինի, — հարցրի, — չըլինի՞ միտքդ փոխել ես, ուզում ես հայրենիք վերադառնալ:

— Ո'չ, աղա-ջան, ասօր կինս մըր մարած գերդաստանին ճրագը վասեց, դարձեալ մըր տունը չէն կեղնի հո՛ն մըր գիւղին մէջ. կինս մի արու զաւակ ծնաւ, անունն ալ ասօրուանէ կնքեցի Մկրտ (Մկրտիչ...) Զգիտե՞ս որու անունն դրած եմ որդուս: Մկա ես վախ չունիմ:

— Մինչեւ հիմա ինչի՞ց էիր վախենում:

— կը վախենայի որ հոս մեռնիմ անզաւակ, կողակիցս մնայ անտէր՝ ուրիշներու

գոներուն կտոր մը հաց մուրալիս, իսկ
մըր ճրագը հոն — մըր երկրին մէջ յաւի-
տեա՞ն մարի... Ասօր կնոջս ըսի, ա'լ հոդ
չընես, Տէրը մի արասցէ, եթէ մեռնելու
ալ ըլլամ, Մուկուչս քըզի կը տանի մըր
երկիր... Շէ՛ն մնայ Աստուծոյ տունը, որ
մըր տիսուր սիրաերը ուրախցուց :

Մարկոսը ուրիշ գաղթականների պէս
չէր, նա չէր թողնում, որ իր գեղեցիկ
կինը ուրիշների գոներին հաց մուրայ, նա
ինչպէս իր երկրում, այնպէս էլ օտարու-
թեան մէջ, կամինում էր սպասուով մեռ-
նել. ուստի իր կնոջը խրատում էր :

— Պետոյի աղջիկ (Պետրոսի աղջիկ),
տե՛ս, դուն ուրիշ գաղթական կանանցմէ
օրինակ չպիտի առնես, որոնք աստեղ ան-
տեղ կաշխատին, կը մուրան իրենց էրիկ-
ներու պէս աղատ, կը բերեն իրենց քիւլ-
ֆաթը կերակրելու... Գինաս ատոր հետե-
ւանքը ինչ կըլլայ, -- ըշտէ մի քանիսնին
արդէն իսկ զրկուած են մըր նահապետա-
կան ամօթխածութենէ -- անքան ակամայ
փչացած են, որ մինչեւ անդամ ոչ մի վատ
խօսք անոնց չի աղղեր... Զէ՛, ես աղպէս
բան չեմ սիրած եւ չեմ սիրեր, թող օրա-
կան 20-30 կապէկ ըլլայ, բաւական է մը-
զի, միայն թէ մըզի ըսող չըլլայ թէ «Ճըր

աչքի վլայ յօնք կայ» :

Եւ մեր Մարկոսը օրն ի բուն անգաղար աշխատում էր, որպէս զի իր ընտանիքը պատուով ապրի օտարութեան մէջ եւս :

Մա' րկոս, արի', ես քեզ համար մի լու գործ եմ գտել, — ասում էր մի անգամ անցեալ ձմեռ * մի մարդ, — արի', մեր եկեղեցու բազն ու ճամբան մաքրէ, որբէ ձիւներից, քեզ եկեղեցուց վարձատրութիւն կը լինի :

— Աստուած կեա'նք տայ քըզի, — լըսեցի Մարկոսի ուրախ պատռախանը, երբ պատահմամբ այդ միջոցին անցնում էի երկու խօսակիցների մօտից, — կուզամ, ինչո՞ւ չեմ գայ օ՛ր :

— Քեզ մինչեւ անգամ եկեղեցու մօտ ձրի օդա մ'էլ կը ճարեմ:

— Աստուած կեա'նք տայ ճժերուգ, զաթի աս սաստիկ ձմբան պահուն ոչ տեղ ունիմ մնալու, ոչ վառելու ցախ, ոչ ալ փարա :

Այնուհետեւ ես ամբողջ ձմեռուայ ընթացքում տեսնում էի այդ հայրենազուրկ երիտասարդին եկեղեցու բակի ու ճանապարհի ձիւները մաքրելիս :

* Առաջի ձմեռն էր, որ նա անց էր կացնում կ . . .

— Ծո՛, ինչո՞ւ այսպէս ուշ ես սկսել մաքը-
րել եկեղեցու բակը, — մի անդամ եկեղե-
ցու դրանը նկատեց մի ծերունի քահանայ,
— հիմա ո՞նց ես, գլուխդ կը ջարդեմ այս
գաւազանովը . . . լակո՛տ, քեզ ո՞վ է վար-
ձել. փո՛ւչ գաղթականներ, գալիս են այս-
տեղ, մեր հացը ուտում են, եկեղեցուց
վարձ են ստանում, չեն էլ ուզում ժամա-
նակին իրենց գործը անել:

— Փառաւորիս, տէր հա՛յր ծառայ եմ
սուրբ աջիդ, — ցախաւելը վայր գցելով
գետնին՝ վազեց մեր Մարկոսը դէպի զա-
ռամիւալ տէր հայրը՝ ըստ հայկական նահա-
պետական սովորութեան՝ նրա ձեռքը համ-
բուրելու :

— Կորի՛ր, անպիտան, ակսնում ես էս
գաւազանը, շան ծնունդ, քեզ բան եմ հար-
ցնում, պատասխանիր . — ո՞ր տեղացի ես
եւ ո՞վ է քեզ վարձել :

— Խնուսայ եմ, շփոթուած պատասխա-
նեց երիտասարդը :

— Ո՞ր գիւղից :

— Գովանգուկայ :

— Հա՛, գիտեմ, ձեր գիւղը աւերուած
է, ձեր գիւղացիներից շատերն եկան այս
կողմերը. ե՞րբ ես եկել, կնիկ ունե՞ս :

— Փառաւորիս, տէ՛ր-հայր, ունեմ, Զ-Ց

ամիս կայ գալու :

— Ո՞րտեղ կը մնաք :

— Եկեղեցու մօտ տեղ մը մըզի բարի
մարդեր տուած են, ըշտէ հոն կը մնանք,
ձըր սայեցէն ալ կտոր մը հա՛ց կուտենք...

— Ծո՛, որ մեր սայեցէն հաց կուտէք,
ինչո՞ւ ժամանակին չես աշխատում, մաք-
րում, խտըկում. վիզդ գոմշի վզի կը նը-
մանի :

— Փառաւորիս, տէր-հա՛յր, ասօր եր-
կրորդ անդամն է որ կը սրբեմ ձիւնը, չէ՞
որ ասօր ողջ օրը ձիւն կը տեղայ, բակը
կը լեցնէ . . . , ոլատասխանեց Մարկոսը ու
վերցնելով գլխից քոլողը՝ մօտեցաւ տէր-հօր
աջն առաւ :

Ես հիացած մնացի այդ բաղդազուրկի հա-
յաստանցու համբերութեան, երկիւղածու-
թեան ու բարեպաշտութեան վրայ : Եւ ա-
հա՛ մի քանի բոպէից մեր տէր-հայրը մոռ-
նալով իր վարմունքը՝ խաղաղ սրտով ե-
կեղեցում ժամն էր օրհնում, «Հայր-մերն»
ասում, իսկ նրա ետեւը, մի սեան տակ
կանգնած ջերմեռանդութեամբ ազօթում էր,
ծունը էր դնում Մարկոսը՝ արդէն մոռա-
ցած այն ամենը, ինչ որ կատարուել էր
մի քանի բոպէ առաջ : Նո մրմնջում էր ա-
զօթքներ, նա գրագէտ էր, ուսել էր ի-

բենց դիւղի խալիֆայքահանայի մօտ,
նրանից սովորել էր «հնազանդ լինել իրենց
հոգեւոր հայրերին»...

Ժամաւորները գուրս եկան եկեղեցուց,
գուրս եկաւ նաեւ ծերունի քահանան, եւ
տեսնելով գարձեալ Մարկոսին բակում աշ-
խատելիս հարցրեց.

— Ծօ', օրական քեզ ի՞նչ են տալիս ե-
կեղեցական գումարից :

— 10 կապէկ, ծառայ եմ սուրբ աջիդ,
չէ՞ն մնայ ազգի տունը, — եղաւ երիտա-
սարդի պատասխանը : Նա կրկին անձնա-
տուր եղաւ իր գործին, որ այդ փառքից
չզրկուի :

Այնուհետեւ պատահում էի շատ անգամ
ձմեռը Մարկոսին բահ ու քլունգն ուսին
դրած՝ դէպի հայոց գերեզմաննոցը գնալիս :
Բայց նրա տոռղջ կազմուածքը երկար չդի-
մանալով այդ տաժանելի ֆիզիքական աշ-
խատանքին, մի օր ես տեսայ նրան դէպի
«հիւանդների ընդունարանը» գնալիս : Սա-
կայն այդ անգամին նա երեւաց ոչ թէ այն
առոյդ, հաստաբազուկ, քարի կազմուածք
ունեցող Մարկոսը, այլ տասնեակ տարի-
ներով հիւանդութիւն քաշած մի մարդ,
որը աւելի նսան էր կմախքի՝ քան թէ կեն-
դանի մարդու :

— Այդ ի՞նչ ես դառել, Մարկոս, ի՞նչո՞ւ
ես հիւանդացել, հարցրի ես նրան:

— Ես ալ չըմ զինա, աղա-ջան, ուրկից
եկաւ զիս դտաւ աս անիրաւ ցաւը, որ զիս
ահա՛ ամիս մ'է կը տանջէ:

Իսկոյն եւ եթ ամբողջ մարմնովս սար-
սուռ անցաւ, այլ եւս չկարողացայ ինձ
զսպել, տեսնելով խեղճ գաղթական երի-
տասարդին անյուսալի գրութեան մէջ, որը
կարծես աղերսում էր ինձ օդնել իրեն, ա-
զատել այդ անդութ ցաւի ճիրաններից:

Բժշկի քննութիւնից երեւաց, որ այդ
երիտասարդը վաս սննդի, բնակարանի ու
անչափ աշխատանքի պատճառով անբժշկե-
լի ցաւի էր տիրացել, ուստի եւ ազատ-
ւելու համար հարկաւոր էր լաւ պայման-
ների մէջ դնել նրան, յարմար բնակարան
էր պէտք, լաւ ուտել, լաւ խմել, լաւ
հագնել եւ, որ ամենագլխաւորն է, տաք
կլիմայում ապրել, որոնցից եւ ոչ մէկը չու-
նէր նա:

Վերջապէս երկա՛ր տատանուելուց յետոյ,
Հայոց Բարեգործական տեղական ճիւղի
հաշուով Մարկոսը իր վերջին հրաժեշտը
տալով իր ընտանիքին մտաւ զինուորական
հիւանդանոցը . . .

— Մնաս բարեա՛ւ, Պետոյի աղջիկ, ար-

տասուախոռն աչքերով դիմեց իր կհոջը ,
որ քար էր կարել աեղն ու տեղը , — մնաս
բարեա՛ւ , սիրելի Մուկուչ , նամուսով զա-
ւակ ըլլաս , մօրդ պատիւը ճանչնաս , մօրդ
չթորգես աս օտար երկրին մէջ , որ ա՛խ քա-
շելով հոս մեռնի . . . Այսպէս խօսեց նա երբ
երկու գաղթականներ իրենց ձեռքերի վրայ
դուրս էին բերում նրան խրճիթից՝ կառ-
քով հիւանդանոց փոխադրելու համար :

— Պետոյի աղջիկ , հաղիւ լսելի ձայնով
շարունակեց նա , մօ՛տ արի , բե՛ր զաւակս
. . . Մուկուչ , ծօ՛ , նամուսով զաւակ ըլլաս ,
հօրս մարած օջախը չէն ընես , անոր եր-
դիքէն գարձեալ ծուխ ելլէ . . . իսկ դու Պե-
տոյի աղջիկ , դուն ու քու Աստուածը , զիմ
նամուսը , բասիբը , պատիւը գետնովը չզար-
նես . նայէ՛ , տե՛ս թէ ինչե՛ր եմ քաշեր՝ քո
պատիւը , որ իմս ալէ , պաշտպանելու հա-
մար , — զայն որ մեծ զոհողութիւններով
ձեռք բերած եմ , հեշտ ու աժան գնով ձեռ-
քէ բնա՛ւ տալու չէ . . . Ալ մնացածը գու գի-
նաս , մնաք բարո՛վ . . . Հա՛ , երբ երկիր
երթաս՝ զիմ կողմանէ շատ բարեւ կը-
նես բարեկամներուս :

Մի քանի օր յետոյ եկեղեցում տեսայ մի
շատ հասարակ փայտից շինած գագաղ , շուր-
ջը գաղթական կանայք ու տղամարդիկ , ո-

բոնք բոլորն էլ ազի արցունք էին թափուժ
ջահէլ ջիւան Մարկոսի անշնչացան գիակի
վրայ : Նրանց մէջ ես ճանաչեցի խեղած ե-
րիտասարդի այրիացեալ կնոջը , որը հա-
մարեա՛ խելազարուել էր ...

Այդ բոպէին բերին եւ մի մահացած երե-
խայի գիակ ու տեղաւորեցին Մարկոսի գըր-
կում . դա մի ուրիշ գաղթական կնոջ զա-
ւակ էր . մայրը ողբում էր որդու կորուստը :

— Մարկոս , լաօ՛ , զիմ որդուս լաւ ըշկէ ,
պահպանէ , եթիմ է , հար չունի , մար չունի
քովը :

Յուղարկւորները մօտեցան դագաղին ,
ուզում էին վերցնել , որ յանկարծ Մար-
կոսի խեղած այրին դրկեց դագաղը .

— Մարկոս-ջա՞ն , ախր դու բերեր ես քո
«պատիւը» քո երկրից հոս , աս օտար եր-
կիրը , կը թորգիս կ'երթաս զանիկա... Տա՛ր ,
դուրբա՛ն քըզի , հետզ պատիւդ ա՛լ ուր որ
կերթաս ... Թող հետզ ըլլամ , մի՛ մերժիր
խնդիրս , ի սէր մեր ամուսնութեան ... չէ՞
որ պատւոյդ վրայ կըգողայիր կենգանու-
թեանդ ատենը , ո՞ւմ կը թողուս ... Անգամ
մ'ալ խօսիր , անուշիկ էրիկս , ախր ինչո՞ւ
լոեր է քո բլբուլ լեզուդ ... :

